# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 14

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

Հաստատել հետևյալ օրակարգը.

1. <<Մրգավանի բ/ա>> ՓԲԸ-ը <<Մրգավանի բ/ա>> ՀՈԱԿ վերակազմավորելու մասին:

2. Գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական արտադրության նշանակության փոխելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ
5. ՎԼԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 15

## <<ՄՐԳԱՎԱՆԻ Բ/Ա>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ <<ՄՐԳԱՎԱՆԻ Բ/Ա>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության«Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

1. <<Մրգավանի բ/ա>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել <<Մրգավանի բ/ա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Համայնքի ղեկավարին՝

ա) մեկամյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը և պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.

բ) հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների՝ ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.

գ) կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը, կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը.

դ) կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը:

3. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ

հոդվածի 2-րդ կետի«է»ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարին:

4. ՓԲԸ տնօրենին. ընկերության բոլոր պարտատերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

5. Համայնքի ավագանու 08.07.2014 թ. թիվ 10 որոշումը համարել անվավեր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ

5. ՎԼԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 16

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածը՝ Մրգավան համայնքի ավագանին

*Որոշում է*

Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով Մրգավան համայնքում հողի սեփականատեր Գրիգոր Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 0,35175 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,0260 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել գյուղարտադրականի՝ գյուղարտադրական օբյեկտի կառուցման նպատակով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ
5. ՎԼԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ